* * *

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Ողջոյն քեզ, սենեակ, իմ անդորը անկիւն.
Ալեծուփ կեանքի գոռոց և վայիւն
Չեն չեն սողում երբէք քո փակ դռնից ներս
Քո մէջ անձնիշխան տիրապետն եմ ես։
Ամագէմ ոտին կրուի և արեան
Կանգնում է անզօր քո շէմքի առաջ,
Ուր հրսկում է միշտ Աստծոյ պահապան
Իւր հովանաւոր թևերը պարզած։
Եւ ազատ եմ ես քո միշտ հիւրընկալ
Ցարկի տակ ձրգել զբրահ ու զէնքեր,
Թօթափել կրուի փոշին ու հոգալ
Վիրաւոր սրրտի ծրխացող վէրքեր.
Ազատ եմ հանգչել խաղաղ, տնվրրդով,
Ազատ եմ անտես ժրպտալ, ծիծաղել
Ու չարի համար լալագին աչքով
Երեսրս դեռնին Աստծուն աղօթել...